աթաբեկը չէր կամենում օգնել, որի արարքի պատճառը թշնամանքն էր, այլ ոչ թե վախը»[17]: Իվանեի և Շալվայի ջանքերը նման պարագաներում զուր անցան. «Շալվան հենց տեղում գերվեց հույժ մեծ բաղմության կողմից, իսկ Գառնիի սարերի ծերպերին ապաստանած Իվանեն վերևից գցված քարով սպանվեց»[18]: Ճակատամարտի վախճանը պատկերավոր է նկարագրում Կիրակոս Գանձակեցին. «Իսկ զօրն վրաց այնմ ուշ ոչ եդին, այլ փախեան ի տեղւոջէ անտի, մինչև այր զընկեր ի փախուստ ո՛չ գիտէր: Եւ երթեալք առանց ուրուք հալածելոյ ամենեքեան ի վախից ի վայր մղեալք՝ ի ձոր անդր լնուին ի գլուխս քաղաքագեղն Գառնւոյ: Եւ իբրև տեսին զայն զօրքն սուլտանին, զհետ մտեալ՝ զբազումս կոտորեցին և զայլս գահավէժ արարին»[19]: Ինքը՝ Իվանե աթաբեկը, հազիվ հազ կարողացավ փախչել և ապաստանել Գեղի (Քեղի) ամրոցում[20], որտեղից էլ վերադարձավ Բջնի[21]:

Գառնիի ճակատամարտում Ջալալ ադ-Դինի հաղթանակը սովորական չէր այն առումով, որ ձեռք բերվեց ոչ միայն և ոչ այնքան նրա զորքերի խիզախության շնորհիվ (ավելին՝ խորեզմշահը դժգոհ էր մնացել իր բանակի աջ թևի գործողություններից)[22], այլ հակառակորդ բանակի զարմանալի թույլ դիմադրության հետևանքով[23]: Այս հանգամանքը հայ-վրացական զորքերի պարտության պատճառների հանգամանալից պարզաբանմանն առավել մեծ կարևորություն է հաղորդում[24]:

Քննվող խնդիրը լուսաբանող սկզբնաղբյուրներից ամենաուշագրավ վկայությունները պատկանում են Վրաց ժամանակագրին, որը Գառնիում հայ-վրացական զորքերի պարտության հիմնական պատճառը համարում է միջ-

---

17 «Վրաց ժամանակագրություն», էջ 60 (այս և հետագա ընդգծումները մերն են—Հ. Մ.):

18 Նույն տեղում, էջ 61:

19 Կիրակոս Գանձակեցի, էջ 225, հմմտ. Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 66:

20 Ստեփանոս Օրբելյան, էջ 399, «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 39: Ամրոցի անունը հետազոտողները երբեմն հիշատակում են «Գեղե» (Քեղե) ձևով (Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 199, Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, էջ 185, ᲝᲗ. ᲯᲝᲗᲐᲑᲔᲨᲕᲘᲚᲘ, ქართველი ერის ისტორია, III, თბ., 1966, გვ. 54, ծան. 2), այսպիսով ուղղական ընկալելով սեռական հոլովաձևը և առանց նկատի ունենալու «ի»-ով վերջացող հատուկ անունների հոլովական առանձնահատկությունը (Ս. Ավագյան, Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում («Մատեն և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 129): Ամրոցի պատմության և տեղագրության շուրջ տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 33, Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 372—375:

21 «Վրաց ժամանակագրություն», էջ 61: Զ. Բունիաթովին թվացել է, թե Իվանեն Գառնիից անմիջապես փախել է Բջնի (ан-Насави, с. 363, прим. 6), քանի որ պատմիչը նշում է Իվանեի վերադառնալը. «Իվանե աթաբեկը վերադարձավ Բջնի, սուլթանը՝ Ատրպատական և Նախիջևան» («Վրաց ժամանակագրություն», էջ 61):

22 ан-Насави, с. 160.

23 Աղբյուրները չեն հաստատում այն կարծիքը, թե «Գառնիի ճակատամարտը չափազանց համառ բնույթ է կրել» (Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 185):

24 Անընդունելի է այն բացատրությունը, որ առաջարկում է Գ. Հովսեփյանը. ըստ նրա, հայ-վրացական զորքերը «չարաչար պարտություն կրեցին իրենց անփութության շնորհիվ» (Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 45):